

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

ԽՈՐՀՈՒՐԴ ԼՈՒՍԱՒՈՐ

Հեզ էր, կ'ըսեն, անունը լոյս է արդէն,
 Ժըպիտի պէս որ ամէն տեղ կը սիրուի.
 Մեզ հետ է միշտ, հեռանալով դարերէն,
 Իր քայլերուն ձայնը քընար կը թըւի:

Ամէն մէկ հայ դայն կը տեսնէ ու կը զգայ,
 Իր սրտին մէջ, իր երգիքէն լոյս իջած.
 Երգի պէս է որ հեշտօրէն երբ կու գայ,
 Աղօթք կ'ըլլայ, կարծես մոմի ձեւ առած:

Սերովբէներ անշուշտ առին Յիսուսի
 Շըրթունքներէն անմեկնելի իր անունն.
 Երկինք Ներսէս, երկիր կոչեց Շնորհալի
 Եւ ինքն եղաւ հայ ժամերու սրբութիւնն:

Տենչն եղաւ երգ, լեզու բոցուտ Սէրն եղաւ
 Ու ճըմլեցաւ հոգին ինչպէս կարմիր նուռ,
 Երբ երկնաթեւ Աւետարանը տեսաւ
 Երկաթագիր հայ տառերով հընարոյր:

Ի՛նչ երազներ, եւ ի՛նչ տեսիլ լուսաւոր
 Երկինք եղան, աներեկոյ հորիզոն.
 Աչքերը ծով, բիւրեղեայ սիրտը սափոր,
 Եւ ինքն Աստուած նշխարի մէջ իջաւ հոն:

Շընորհքն եղաւ ճերմակ սըփոռոց խորանի,
 Սուրբի հոգին վըրան թըռչող աղանի:
 Աղօթեց նա տառապանքով զըղջումի,
 Հայոց համար, մեր վանքերուն, աշխարհի:

Մեր յոյսն հիմա իր աղօթքով կը բացուի,
 Մեր արտերուն կ'ըլլայ ցորենն հասկ ոսկի.
 Ի՛նչ ցընծութիւն եւ ի՛նչ քայլերդ հաւատքի,
 Որ բուքն է մեր, նարեկացին տասնաղի:

Ուրիշ այդ է մեր ԱՌԱՒՕՏԸ ԼՈՅՍԻ.
 Եւ ապագայ եւ զօրութիւն անցեալի.
 Միշտ Մասիսէն մեր նոր արփին կը ծագի,
 Մեր յոյսերու կանթեղին հետ մըշտավառ:

Երբոր նընջենք, հայրենի հողն անկողին,
 Տաք է մեր կուշտն, եւ մեր թիկունքն հաստատուն.
 Այսպէս ուղեց իր աղօթքով Շնորհալին,
 Պանդուխտներուն եւ հայրենի հիւղերուն:

ՋԱՐԹԻՔ ՈՐԴԻՔ

Արփին է որ ձեզ կը կանչէ, եղբայրներ,
 Եկան կոյսերն իմաստուն.
 Բացէք դըռներ, պատուհաններ եւ փեղկեր,
 Համբոյր տալու արեւուն:

Աստուած մը կայ վեր ամպերէն, աստղերէն,
 Որ երգ կ'ուզէ օրհնութեան.
 Ելէք բըռնած հիւն հաւատքի բաշերէն,
 Թող լոյսն իջնէ ձեր վըրան:

Թող դադարին փող ու զէնքի շաշիւններ,
 Խաղաղութիւն աշխարհի.
 Թող դադարին հեշտանքի ձայն, մարդու սէր,
 Սուրբ է ճամբան երկընքի:

Ջարթիք որդիք Արարատեան աշխարհի,
 Արեւ լեցուի սար ու ձոր:
 Թող ժամերուն շողան խաչեր դէպ' երկին,
 Ուրիշ պայծար է այսօր:

Ջարթիք որդիք ամրոցներուն մարտական,
 Ասպարներով անխորտակ.
 Այս առաւօտ, ամէն առտու Ռուբինեան,
 Թող ծածանի դըրօշակ:

Ձարթիք կոյսեր, Հըռոմկըլան ձեզ խորան,
Սիրտ սըրտի քով վառելու.
Տենչեր ունիք՝ ձեր աչքերով կուսական,
Գեղեցկութիւն ցանելու:

Ձարթիք, հաղար ոսկի ցորեն ցանելու,
Անդաստանէ անդաստան.
Ձարթիք, ուժգին մուրճը սալին զարնելու,
Խոփ ու մանդաղ բոցանան:

Ո՛հ, փոխեցէք մայրեր ձեր սիրտն աղօթքի,
Որ քաղցրաձայն սիւգ ըլլան.
Դուք եղած էք միշտ մաքրութիւն սիրելու
Օճախին քով հայկական:

Ձարթիք որդիք, աղքատ, հարուստ միասին,
Ձարթիք Հայեր տարագիր.
Լայն թեւերով մեր մէջն է սուրբ Շնորհալին,
Օրհնելու տուն ու երկիր:

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Աստղերէն անդին, լուսնակէն անդին,
Առին արեւէն Լոյսն առաւօտեան.
Այդ Լոյսն էր կապոյտ, այդ Լոյսն էր դեղին.
Ծիրանի դօտի մեր հողին վըրան:

Աստղ ծագեցաւ Մասիսի վըրայ.
Ի՛նչ գեղեցիկ է աշխարհն հայրենի.
Բացին վանքերու դռներն հընօրեայ.
Մըշակն արտին մէջ Լոյսով կ'արբենայ:

Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար.
Մեռնիմ խօսքերուն խորհուրդներով լի.
Աղօթք աղօթքի համբոյր է խոնարհ.
Ինչպէս կը սիրեն ե՛ւ որդի ե՛ւ մայր:

Հայրապետ մ'այնտեղ, չուրջառն ոսկեղէն,
Կը բաշխէ նըշխար ճաճանչի նըման.
Սըրբութիւն սըրբոց կ'իջնէ երկինքէն,
Երբ Շնորհալին կ'երգէ հոգեձայն:

Կ'երգէ ու կու լայ աշխարհի համար,
Անոնք որ կոյր են եւ սըրտով ցամքած.
Ծովացած սիրոյ աղբիւր է վարար.
Մեր Շընորհալին՝ Յիսուս հայացած:

Հոն դըղեակ մը կայ դռներն երկաթէ,
Որմերն հաւատքի քարերով շինուած.
Լոյսն երբ կը ծագի, կարծես բիւրեղէ
Թակոյկ մ'է հսկայ Աստուծով լեցուած:

Կը հընչեն մարտկոց, հաղար պատուհան,
Հաղար արեւներ տաւիղ անսասան.
Հայրապետ մը կայ ձեռքեր ծիածան,
Կը շօշափէ Լոյսն աղօթքի նըման:

Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար,
Լոյս տուր Հայերուս, օճախին հանգած.
Ես կը հաւատամ այն աստղին պայծառ,
Որ մեր երկընքին կը ծագի անանց:

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

Ա.

Ձիս տանջեցին, սիրտըս խաչէն կախելով.
Ո՛րքան երկար է ճամբան.
Ամէնուրեք ես կը տեսնեմ իրար քով
Կեանքը մահէն անբաժան:

Խաչեցին զիս, մեղքն էր բռնեռ սայրասուր,
Գըթացէք ո՛վ աշխարհներ,
Կողըս եղաւ անմեղութեանըս աղբիւր,
Խոց մը բացին կարեւէր:

Եղէք ինծի մօր մը նըման ախտակից,
Մահը մերն է ամէնուս.
Նոյն ծընունդով եղանք իրար մենք դըրկից
Տըւէք ինծի քիչ մը յոյս:

Ի՞նչպէս պատմեմ սըրտիս թաքուն խորհուրդներ,
Անունն ի՞նչպէս մեղքին տամ.
Շատ են անոնք, ինչպէս ծովու աւազներ,
Որ համբելու կը սոսկամ:

Ի՞նչ տըխուր է փափուկ լոյսէն հեռանալ.
Մութը բռնել պատէ պատ.
Սըրտին վըրայ սեւաթոյր վէրք մը բանալ,
Փոխան սիրոյ շողակաթ:

Ո՛վ ցանկութիւն, աչքեր ունիս դեղեցիկ,
Բայց անթարչամ ծաղիկ չես.
Մի՛ խոցեր սիրտս նետի նըման սըլացիկ,
Նայուածքներով սըրտակէղ:

Ի.

Զըղջումի երգն ես կը հիւսեմ թել առ թել
Գիշերուան սեւ մազերով.
Սէրն ալ յաճախ պէտք է երգել արցունքով,
Աչք աչքի մէջ նայելով:

Ո՛վ Աստուած իմ, դուն սորվեցուր ինձ ողբալ,
Ինչ որ մեղք է անանուն.
Պէտք է այդուն սիրտն անձրեւի պէս լըւալ,
Յետոյ պարզել արեւուն:

Ի՞նչ օգուտ ես ծաղիկ ժողվեմ դերդ մեղու,
Խորիսիս շաղուեմ տենչերու.
Երբ կուրծքիս տակ խոր ուռ մը կայ վիշտերու,
Որ դէպի մահ կը տանի:

Ծունկի եկած ժամադրքի էջին տակ,
Պաղատանքներս կը կըրկնեմ,
Տէ՛ր, իմ աչքերս բաց դերդ երկու արեգակ,
Խաչելութեան ցաւին դէմ:

Ես կը սոսկամ որդեայթէն որսողին,
Պարաւանդուած ախտերով,
Ո՛հ, ի՞նչ դառն է իյնալ մեղքի մէջ կըրկին,
Երբ կնքեցին մեռնով:

Բայց քաղցր է միշտ Շնորհալին հետ ողբալ,
Կանչել աշխարհս աղօթքի.
Քաւել յանցանքն ու լոյսի պէս սըրբանալ,
Երկընքին տակ հայրենի:

Գ.

Երեք անգամ խաչ հանցի երեսիս
Քարին վըրայ ծընրադիր.
Արցունքիս մէջ հայելացաւ ողջ երկիր
Խոր է զըղջումը սըրտիս:

Քանի հաղար հայու շըրթներ կըրկնեցին,
Լացէք աշխարհս մահնայն,
Սուրբ հայր մեկաւ մեղ հետ լալու հոգեւին,
Թափուր օրերը կեանքին:

Թաղեցէք զիս այս երգին մէջ աշխարող,
Բառերն ըլլան քուրձ խայթող,
Տառերն ըլլան փուշերու պէս խոցոտող,
Ըլլամ սիրոյ նահատակ:

Ես չըմընամ մութ օրերու շըրթայուած,
Լացն ալ ինծի հեշտ ըլլայ.
Երթամ նետուիմ աւազանն ես Սելովմայ,
Շըրաչքներու սահմանուած:

Երբ տարիներն ուսերս ճընչեն մինչ հողին,
Ափիս դըրէք այս մատենն,
Ես զըղջումով ետ կը դառնամ մանկութեան,
Նորէն կարօտ իմ երկրին:

ՍԷՐ ԱՆՈՒՆ ՅԻՍՈՒՍ

Ինչ որ սըրտիս մէջ ձայներ լըսեցի.
Գանդիւն էր երկնի.
Երբոր ըՍտեղծողն աստղէ աստղ անցաւ,
«Աղուոր է» ըսաւ:

Սէր անուն Յիսուս, ճըմլէ դու նորէն
Սիրտըս քարեղէն.
Ի՞նչ քաղցր է նըստիլ Տիրամօր ծունկին,
Լալու միասին:

Անունին մէջ կան հայրենի աշխարհ,
Վանքեր ու խաչքար.
Կան Արարատին ոսկի կատարներ,
Խոր խոր հովիտներ:

Սէր անուն Յիսուս՝ զեփիւռէ զեփիւռ
Շընչող վարդի բոյր.
Մայրերու հաւատք, Նարեկի համբոյրն
Աղօթամատեան:

Սէր անուն Յիսուս, սիրով քո ճըմլէ
Սիրտըս խեցիէ.
Ըլլամ ես տաճար, գըմբէթներու խաչ,
Զանգակներու կանչ:

Մեր երգն հայրենի երկինքէն թող դայ,
«Սիրով քով ճըմլեա».
Մըչակ ու բանուոր երգեն, հաւատան,
«Սիրով քով ճըմլեա»:

Սէր անուն Յիսուս, ճըմլէ համօրէն
Սըրտեր քարեղէն.
Սըփռէ մեր վըրան ծիածանի գոյն,
Այդ օրհնեալ անունն:

ՔՈ ԾՆՆԴԵԱՄԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ...

Նըւազներդ, ո՛վ Հայր, մեղի ճամար են,
Մեր սըրտին գանգիւն.
Հիւսեցիր երազ մօր մը տեսիլքէն,
Ծոցն արքայութիւն:

Երկինք մ'անսահման յանկարծ բացուեցաւ,
Աղուոր էր, աղուոր.
Մասիսի ծագին կոյս մ'երեւեցաւ
Աղուոր էր, աղուոր:

Յուրացին լեռներ, ցուաց Սեւան լիճ,
Կոյսն էր շնորհաւոր.
Մանուկ մը ծոցին՝ աշխարհի Փըրկիչ
Աղուոր էր, աղուոր:

Շուշան էր ճերմակ, քողերով պատած,
Կ'իջնէր Հայաստան.
Մեր աղօթքին մէջ կարծես տան աստուած,
Մեր երգիքն էր ան:

Երկինքն էր ունայն, կապոյտն էր անդոյն,
Արտերն անցորեն.
Բայց ինչ արշալոյս բըռնեց հորիզոնն
Տիրամօր դէմքէն:

Ես ո՞ւր երազեմ մայրական համբոյր,
Ծաղիկէ ծաղիկ.
Ո՞ր որբը գըրկած տանիմ Տիրամօր
Քեզ մայր աւասիկ:

Ո՞ր հրեշտակն արդեօք երգեց տունէ տուն,
Ողջոյն ձեզ, մարդիկ.
Ծընաւ Մարիամ աստղի մը հանգոյն,
Բարձրացէք տանիք:

ՀԱՐՍԻՆ ԼՈՒՍՈՅ

Աւետիս քեզ Հայաստանի կոյս աղուոր
Թեւեր առիր Սիոնէն.
Աւետիս ձեզ երգ ու ծաղիկ հողերու
Մեր հայրերու տենչերէն:

Խունկով լեցուին թող մեր ժամերն ամէն օր,
Արեւն առատ բակերուն.
Մեր տուններուն թաւիչ ըլլայ շուքն անդորր
Աչքերուն մէջ քաղցրութիւն:

Դաշտերու մէջ առաջաստներ թող պարզեն,
Որաներով հասկաթուռ.
Թող կանանչնան Կիրակիներն համօրէն,
Եօթը գոյնով պըճնաւոր:

Մեր ժամերուն կիրակնօրեայ երգն է այս,
Համով, հասուն ծիրանի.
Քիչ մը հաւատք եւ քիչ մ'արցունք ոսկեթաս,
Ձօն կը տանին Յիսուսի:

Եկեղեցւոյ դուռը բացուած կ'երկարի,
Ծիծաղի պէս տունէ տուն.
Մանուկ կ'ըլլան հողէ մարդիկ ծերունի,
Աղօթքն իրենց շրթներուն:

Ու կիրակին շողի նման կը քալէ,
Կը բարձրանայ որմերէն.
Առաւօտեան արեգակէն բոյր կ'առնէ,
Վար ցանելու երդիքէն:

Արթընցէք դուք, ո՛վ զաւակներ Սիոնի,
Փեսան կու գայ եւ կ'անցնի.
Թող հարս ըլլայ հայու հողին սիրելի
Ինչպէս մաքուր աղաւնի:

ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ

Երեկոյեան մեր աղօթքն է վաղեմի,
Երբոր կ'իջնեն մութն ու յոգնած ըստուերներ.
Երբ լուսինն իբրեւ աստուած հին ու ծեր,
Կը փակէ դուռն ու պատուհան աշխարհի:

Երբ կը շրջին դեւն ու աղիճ ցանկութիւնն
Լոյսեր վառած պատուհանէ պատուհան,
Մեր աղօթքն է, գութ կը հայցէ հայրական,
Աջը պահակ կարկառելու սրբտերուն:

Հալածէ, Տէր, աներեւոյթ սատանան,
Մեր հանդերէն, մեր դռներէն խաչակիր.
Ժամերուն շուրջ, հըսկողներուն ծընրադիր
Լոյսըդ կախէ սուրբ երեսիդ տեսութեան:

Տօն ըլլայ միշտ, մեզ հետ խօսէ Հայր Աստուած,
Սէրըդ պարզած զերդ առաքաստ աշխարհի.
Աչքերս փայլին գեղեցկութեամբը լուսնի,
Աղօթելու երկու թեւերդս պարզած:

Տուր պահապան սուսերամերկ հրեշտակներ,
Որոնց անունը սըրտիս մէջ գըրեցիր.
Ալ չըդողամ խաւարներէն մեղադիր,
Մեր տուներուն օճախն ըլլալ լուսաբեր:

Մեր երդիքին, Հայր, քու ձեռքովդ խաչ մը դիր,
Խաղաղ հանգիստ աչքերս յառած աչքերուդ.
Այս գիշեր ալ ցոյց ինձ կըրկին սիրոյ գութ,
Որ չարին գիրկն ես չըմնամ տարագիր:

Ի ՔԷՆ ՀԱՅՏԵՄԲ...

Ճամբորդ եմ ես փեշէն բըռնած Տիրամօր.
Թեւանցիկ եմ ինձ Յընձութիւնն իբրեւ մայր,
Մըխիթարանքն իբրեւ քոյր,
Խաղաղութիւնն ալ համբոյր:

Տէ՛ր, զարդարէ զիս բարութեան դործերով,
Ըրէ հաւատք, սէր ունենամ ամէն օր,
Աղօթքին պէս Տիրամօր,
Մարդերուն մէջ մեղաւոր:

Դուն կանչեցիր աշխատաւորն այս օրուան,
Մըշակն յոգնած, հովիւն ինկած սարէ սար,
Սըրբէ ճակտէն սըրբազան,
Վիշտ ու քըրտինք հոգեկան:

Անարատներ պահէ ճերմակ հագուստով,
Տիրամօր հետ գան ու նըստին սուրբ Աջիդ.
Իւրաքանչիւրն իր կարգով,
Ամէն մէկն իր տեսիլքով:

Մի թողներ որ մութը պատէ մեռելներ,
Ծաղիկին հետ պակսին սիրոյ ճըրագներ.
Թող Տիրամայրն ու մայրեր,
Հըսկեն ամբողջ գիշերներ:

Ես չեմ փընտռեր ուրիշ հաճոյք, ուրիշ կեանք,
Հաղորդ ըլլամ հայ սուրբերու անունին.
Եւ օր մ'ելլեմ ես երկին
Տիրամօր հետ միասին:

Ոչ մէկ գիշեր ինձ կը բերէ տըխրութիւն
Երբ երեկոն ի Գէն ՀԱՅՅԵՄը կ'երգեմ,
Երբ սրտիս մէջ կը պահեմ,
Հաւատքին հետ մեր տան շէմն:

ՏԱՐԱԾԵԱԼ...

Ձըկայ հայու սիրտ որ լացած չըլլայ,
Տարածեալին հետ խաչելութեան տակ.
Որ մոմը ձեռքին ժամէն տուն դառնայ
Առանց ըմպելու թաղձութեան բաժակ:

Երբոր կը տեսնէ խորանին վըրայ
Յիսուսը խաչուած ոտքով, ձեռքերով,
Տարածեալի երգն իր միտքը կու գայ,
Կ'երազէ լեղին, ըսպունդն իրար քով:

Յանկարծ ծերունի ու ձայներ մանուկ,
Յանկարծ մայրերու սըրտերը փափուկ,
Կը փոխուին մաղմաղ հրաշալի երգեր,
Յիսուս ալ կը զգայ մեզի նըման սուգ:

Երկու անօրէն մարդերու միջեւ,
Կ'ըսեն, աշխարհիս Տէրը խաչեցին.
Ո՞վ ըստեղծեց այդ կոյր ազգն անարեւ,
Բերնին մէջ լուտանք, աչքերուն մէջ սեւ:

Կ'ըսեն թէ կային մեր սարերէն վեր
Դիմացէ դիմաց լուսափայլ խաչեր.
Ուր Շընորհալին յուզուած կ'աղօթէր,
«Նղէք հովանի տարածեալ ձեռքեր»:

Երբեմն ալ զինուած խաչով սուսերով
Պատերազմի մեր հայրերը գացին,
Թէ սուրը փըշէր՝ խաչ կը կանգնէին,
Որ մեր սահմանէն չանցնէր թըշնամին:

Ամէն օր Փըրկչին Ելիմ ողբական,
Սըրտիս կը հասնի ու վէրք կը բանայ.
Այս երգն է որ մեր սուրբ Շընորհալին,
Գըրեց պողպատէ Հայոց հաւատքին:

ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ...

Ես սորվեցայ մօրըս դողդոջ չըրթներէն.
Խոստովանիմ հաւատով.
Նա ինձ համար միշտ կ'աղօթէր ջերմօրէն,
Եւ կը գործէր մատներով:

Նա ինձ համար ծածուկ սըրտով ուխտ ունէր,
Աչքով տեսնէր քահանայ.
«Ա՛հ, դուն Յիսուս» յանկարծ լացին հետ կ'ըսէր,
«Տեսնեմ, յետոյ թող մահ գայ»:

Մէկ հատիկ չէ, Տէր, վեց հատ են վիզէս կախ,
Մանեակի պէս ուլունքէ.
Աղօթքին հետ խորաթափանց ու խաղաղ,
Կը վերանար աշխարհէ:

Սիւզի նըման հոգին կ'անցնէր տունէ տուն,
Ամէն հառաչ ալիք էր,
Հիւանդներուն եւ անկարող հէգ մարդուն
Առողջութիւն կը հայցէր:

Նա կ'ուզէր որ անծանօթն ալ գար սեղան,
Մեր աղօթքի խընճոյքին.
Կ'ուզէր հասնին արդար սրտով թողութեան,
Թըշնամին եւ ատելին:

Ամէն մայր իր իղձերն ունէր մորմոքուն,
Հաւատք այս սուրբ աղօթքին.
Ամէն բառի եւ տան մէջ կայ զօրութիւն
Երկնից իջնող հըրաշքին:

Ամէն մէկ տուն ընտանիք է առանձին,
Ժամ՝ աղօթքի խորանով.
Թոնիրներու խաչերկաթն է նոր եւ հին
Խոստովանիմ հաւատքով:

Անմահութեան այս աղբիւրի եզերքին,
Յոյսը կու գայ ծաղկելով.
Հաւատք կ'ըլլայ, սէր կը փոխուի երկնային,
Խոստովանիմ հաւատքով:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ